ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2026թ-ից, իսկ 2025 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների գնահատում, փաթեթում ներառվող ծառայությունների նկարագրերի սահմանում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է ապահովագրական փաթեթի համեմատական վերլուծություն և գնահատում համապատասխան մասնագետի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով վերլուծության իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրմամբ պայմանավորված հիմնական ծառայությունների փաթեթը նկարագրող փաստաթղթերի մշակման ընթացքում խորհրդատվություն, այդ թվում

1. Ապահովագրական հիմնական ծառայությունների փաթեթում, ինչպես նաև նվազագույն ծավալում ներառվող ծառայությունների նկարագրերի հիման վրա փաթեթների գնահատում, դրանց հստակ սահմանների, բացառությունների ցանկերի մշակում:
2. Փաթեթում ներառված ծառայությունների նկարագրերի ընդհանրացում:
3. Փաթեթում ներառված ծառայությունների և գործող մասնավոր ապահովագրական փաթեթներով առաջարկվող ծառայությունների համադրումների իրականացում::

Փորձագետից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում Պետական առողջապահական գործակալությանը:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, Պետական առողջապահական գործակալության կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն աշխատանքի նկարագրի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 30.06.2025 թվականը՝ երկարաձգման հնարավորությամբ:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն տնտեսագիտության կամ կառավարման բնագավառում:
- Ավելի քան 5 տարվա փորձ կառավարման, բժշկական կամ այլ տիպի տեղեկատվության համակարգման և վերահսկման փորձառություն,
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու կամ բժշկական կազմակերպությունում աշխատելու փորձ,
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների

նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: